ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

29 - 30 հունվարի, 1999 թ. **ք. Երեւան**

1999 թվականի հունվարի 29 - 30-ին, տեղի ունեցավ ՀՀԿ 5-րդ արտահերթ համագումարը:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 1030 պատգամավորներից 970-ը: Համագումարն ընտրեց նախագահություն հետևյալ կազմով՝ Անդրանիկ Մարգարյան, Տիգրան Թորոսյան, Ալբերտ Բազեյան:

Առաջարկվեց հաստատել համագումարի օրակարգի նախագիծը, որն արժանացել էր ներկայացուցչական ժողովի հավանությանը.

Առաջին օր
29 հունվարի, 1999թ.

- ***ի զեկուցում անցած ժամանակաշրջանում կուսակցության գործունեության և ներկա իրավիճակի վերաբերյալ***
- ***Ելույթներ ՀՀԿ խորհրդի նախագահի զեկուցման վերաբերյալ***
- ***ՀՀԿ կանոնադրության (ծրագրի) փոփոխությունների հաստատում***
- ***ՀՀԿ խորհրդի թվակազմի որոշում***

Երկրորդ օր
30 հունվարի, 1999թ.

- ***ՀՀԿ խորհրդի անդամության թեկնածուների առաջադրում և ներկայացում***
- ***ՀՀԿ բանաձևի ներկայացում և ընդունում***
- ***ՀՀԿ խորհրդի ընտրությունների անցկացում***
- ***ՀՀԿ խորհրդի ընտրությունների արդյունքների հրապարակում***
- ***ՀՀԿ խորհրդի նիստ՝ խորհրդի նախագահի ընտրություն***
- ***ՀՀԿ խորհրդի նախագահի ելույթ***
- ***Վազգեն Սարգսյանի ելույթը***

Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանի Համագումարին հղած ողջույնի ուղերձը կարդաց Նախագահի աշխատակազմի ղեկավար պարոն Ալեքսան Հարությունյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հարգելի պատվիրակներ և հյուրեր,
Տիկնայք և պարոնայք,

Ողջունում եմ Հայաստանի Հանրապետական կուսակցության համագումարի հրավիրումը՝ այն համարելով մեր երկրի կյանքում ազդեցիկ ուժ ներկայացնող կազմակերպության կարևոր և գործնական քայլ:

Հանրապետական կուսակցության այս համագումարն առանձնահատուկ է նրանով, որ բազմաթիվ նոր անդամներ են զորագրվում՝ մեր հասարակության լայն խավերի ներկայացուցիչներ, այդ թվում ազատամարտիկներ ու մտավորականներ՝ նոր լիցք և շնչառություն հաղորդելով կուսակցությանը: Համագումար, որ տեղի է ունենում պատասխանատու պահի, երբ մեր երկրի և՛ տնտեսությունը, և՛ քաղաքական ու դատաիրավական համակարգերը գտնվում են կատարելագործման վճռորոշ փուլում:

Ինձ համար կրկնակի հաճելի է, որ համագումարին ներկա են պատվիրակներ, որոնցից շատերի հետ ինձ կապում է մարտական անցյալը:

Թե՛ արցախյան պատերազմի, թե՛ դրան հաջորդած տարիներին մեծ են եղել Հանրապետական կուսակցության և երկրապահների ծառայությունները հայրենիքի առջև: Բարձր եմ գնահատում նաև Ազգային ժողովում «Երկրապահ» պատգամավորական խմբի որդեգրած դիրքը, որ, լինելով կառավարության հենարանը խորհրդարանում, մեծապես նպաստում է երկրի կայունությանը և առաջընթացին: Համոզված եմ, որ այսուհետ ևս՝ վերածնունդ ապրող Հանրապետական կուսակցությունը, լինելով ազգային շահերի հետապնդմանը նախանձախնդիր կուսակցություն, կշարունակի և կխորացնի մեր սերտ համագործակցությունը՝ ուշադրության կենտրոնում պահելով հատկապես բնակչության սոցիալական սուր խնդիրները:

Հարգելի հանրապետականներ,

Մենք ձեզ հետ միասին պատասխանատվություն ենք ստանձնել մեր երկրի և ժողովրդի առջև: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, լինելով երկրի Նախագահի հուսալի հենարանը, պետք է իր նպատակասլաց և եռանդուն մասնակցությունն ունենա մեր հասարակության և պետության կյանքում՝ ըստ ամենայնի աջակցելով երկրի տնտեսական վերելքին, ներքաղաքական կյանքի կայունությանը, ժողովրդավարության արմատական խորացմանը, պետական մեքենայի աշխատանքի կատարելագործմանը և դրանց ճանապարհին ծառացող խոչընդոտների հաղթահարմանը:

Այս խնդիրներից յուրաքանչյուրը կենսական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության ներկայի և ապագայի համար: Մեր ազգային նպատակների իրականացումը հնարավոր է միայն բարենպաստ քաղաքական դաշտի առկայության պայմաններում: Այս դաշտի ձևավորման հաջողությունը մեծապես կախված է Հանրապետական կուսակցության հետևողականությունից և գործունեության արդյունավետությունից:

Կրկին ողջունում եմ համագումարի մասնակիցներին: Հանրապետական կուսակցությանը մաղթում եմ հաջողություններ իր դժվարին, բայց պատվաբեր առաքելության իրականացման ճանապարհին, իսկ համագումարին՝ արգասաբեր աշխատանք:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը,
ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը, ինչպես նաեւ «Հզոր հայրենիք» կուսակցության նախագահ Վարդան Վարդապետյանը, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Այնուհետև հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարյանը:

ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սիրելի կուսակիցներ, հարգելի հյուրեր.

Այսօր իր աշխատանքն է սկսում Հայաստանի Հանրապետական կուսակցության 5-րդ արտահերթ համագումարը: Մենք փորձելու ենք ամփոփել անցած մեկ տարվա աշխատանքը, գնահատական ենք տալու մեր կուսակցության վարած քաղաքականությանը, ուղենշելու ենք մեր հետագա անելիքները:

Հայաստանի Հանրապետական կուսակցության 1997թ. դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած 4-րդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանը պետության ու հասարակության կյանքում եղել է քաղաքական բուռն գործընթացների խիստ լարված շրջան: Հանրապետական կուսակցությունը սկզբունքային դիրքորոշում է ցուցաբերել երկրում ծավալված քաղաքական գործընթացներին, ակտիվորեն մասնակցել դրանց և իր ավանդը ներդրել պետականության կայացման գործին:

1998թ. սկսվեցին քաղաքական բուռն գործընթացներ: Նախորդ տարիների ընթացքում կուտակվել էին բազմաթիվ չլուծված խնդիրներ և՛ քաղաքական, և՛ տնտեսական բնագավառներում: Սակայն չեմ կարող չանդրադառնալ ներքաղաքական կյանքում փետրվարյան իշխանափոխությունից հետո տեղ գտած որոշ լարվածությունների: Դժվար է

ասել, որոշ քաղաքական գործիչներ կորցրել են հիշողությունը, թե հույսը դրել են ժողովրդի կարճ հիշողության վրա: Երկրի նախագահի փոփոխությունից հետո եռանդուն փորձեր են արվում տարածել ու ամրապնդել այն թեզը, թե իշխանության է եկել այսպես կոչված «ղարաբաղյան կլանը»: Ակնհայտ է, որ դա թշնամություն, անհանդուրժողականություն է սերմանում ազգի և նրա մի հատվածի միջև, ինչը հղի է կործանարար վտանգներով: Վտանգվում է Հայաստանի ապագան, վտանգվում է վերջին տասնամյակի ընթացքում ազգային ազատագրական պայքարի շնորհիվ ձեռք բերված ամենամեծ նվաճումը՝ Արցախի ազատագրումը: Բայց միթե այդ մարդիկ մոռանում են, որ Ղարաբաղով իրենք դարձան քաղաքական գործիչներ:

Սուբյեկտիվ կամ օբյեկտիվ պատճառներով արվել են քայլեր քաղաքական, օրենսդրական, իրավական, տնտեսական ոլորտներում, որոնց բացասական արդյունքները երևում են այսօր: Դրվել են, ասես, դանդաղ գործողության ականներ: Եվ այժմ խոսում են ականների պայթման հետևանքով առաջացած իրավիճակի մասին՝ խուսափելով խոսել այսպիսի վիճակ ստեղծողների պատասխանատվության մասին: Թեև, եթե մոռանում են, որ 78 տարի իրենք են ղեկավարել մեր երկիրը, որ այսօր ստեղծված ծանր իրավիճակի համար պատճառներն ու արմատները գտնվում են հենց այդ տարիների թույլ տրված սխալների հիմքում, կարող են մոռանալ նաև ավելի վաղ կատարվածը:

Անկասկած, այսօր երկիրը գտնվում է ծանր սոցիալ -տնտեսական վիճակում, և բնակչությունը արդարացիորեն շոշոփելի փոփոխություններ է ակնկալում: Սակայն պարզ է նաև, որ միայն նախագահական արտահերթ ընտրություններով իրավիճակը շտկել հնարավոր չէ: Լիակատար տեղաշարժեր հնարավոր կլինի ապահովել միայն գալիք խորհրդարանական ընտրություններից հետո, քանի որ խորհրդարանում ևս պետք է հաստատվի քաղաքական ոլորտում առկա իրական ուժերի հարաբերակցություն: Սակայն այս դեպքում էլ որոշ քաղաքական կազմակերպություններ արդեն ունեն իրենց գնահատականը: Նրանք ոչ միայն գուշակում են պատերազմի վերսկսում, տնտեսական աղետ, միջազգային քաղաքական ու տնտեսական շրջափակում, այլև գալիք ընտրություններն են համարում անարդար ու կեղծ: Ոչ չեն էլ փորձում թաքցնել, որ այդ բոլորի կանխումը հնարավոր են համարում իրենց իշխանության գալով: Կարծես թե երեկ իրենց ձեռքին չէր այն: Հանրապետական կուսակցությունն իր վերաբերմունքը արտահայտել է «ՀՀ նախորդ իշխանությունների քաղաքական ուղեգծի գնահատականի» վերաբերյալ նոյեմբերի 2-ի հայտարարությամբ, որը հիմք դարձավ ՀՀ նախագահին կից քաղաքական խորհրդի նույնանման փաստաթղթի ընդունման համար:

Տարեսկզբին ճգնաժամը դարձավ համընդհանուր և անհրաժեշտ էր քաղաքական հանգուցալուծումներ տալ: Տեղի ունեցավ ՀՀ նախագահի արտահերթ ընտրություն: Մեր կուսակցությունը պաշտպանեց Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը, ակտիվորեն մասնակցեց նախընտրական քարոզչությանը և ընտրությունների անցկացմանը:

Ավարտվեցին ընտրությունները, սկսվեց նոր քաղաքական գործընթացների շրջան: Ստեղծվեց քաղաքական հանդուրժողականության, համաձայնության մթնոլորտ: Քաղաքական իրադրությունը ստիպեց համախմբել այն ուժերը, որոնք ունեին գաղափարական ընդհանրություններ, պետության առջև ծառացած խնդիրները լուծելուն ուղղված քաղաքական նմանատիպ դիրքորոշում և գործելակերպ: Այսինքն, ստեղծել երկիրը ստեղծված բարդ իրավիճակից դուրս բերելու ունակ մի քաղաքական շարժում, որը կընդգրկի ոչ միայն հասարակական-քաղաքական ուժերի, այլ նաև անհատների, մտավորականության հսկայական ներուժը, որը մի շարք պատճառներով չէր ընդգրկված քաղաքական գործընթացների մեջ, բայց ընտրություններին ակտիվորեն մասնակցելով, հայտ ներկայացրեց քաղաքականությամբ զբաղվելու:

1998-ի սկզբներին սկսված քաղաքական զարգացումները ստիպեցին երկրապահներին դառնալ խորհրդարանում ամենամեծ քաղաքական ուժը, ինչից նրանք մինչ այդ հետևողականորեն խուսափում էին: Բնական է, որ այդ պարագայում անխուսափելի դարձավ կուսակցական կառույցներով ինքնակազմակերպվելու խնդրի շուտափույթ լուծումը:

Հնարավոր էր երկու տարբերակ՝ կա՛մ ստեղծել նոր կուսակցություն, կա՛մ համախմբվել

այլ կուսակցության հետ, որի գաղափարները, ծրագրերը, գործունեությունը ավելի համահունչ էին երկրապահներին:

Քաղաքական այս զարգացումների փուլում 98-ի գարնանը սկսվեցին քաղաքական կոնսուլտացիաներ մեր կուսակցության և Երկրապահ կամավորականների միության միջև:

Մի քանի ամիս ընթացող խորհրդակցությունների արդյունքում որոշվեց ընթանալ երկրորդ ուղիով, որի տրամաբանական արդյունքը եղավ 1998թ. հուլիսի 20-ի Հանրապետական կուսակցության, Երկրապահ կամավորականների միության և Ազգային Ժողովի «Երկրապահ» պատգամավորական խմբի հայտարարությունը՝ քաղաքական համախմբման նպատակով Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագրի կազմակերպական, մարտավարական խնդիրների նորացման գործընթաց սկսելու մասին:

Մենք ունեինք պետության առջև ծառացած խնդիրների նկատմամբ դիրքորոշումների, գաղափարական ակունքների ընդհանրություն, երկարամյա համագործակցության փորձ: Մեր միասնության մեջ հիմնական դեր է խաղում այն, ինչի համար մենք միասին ելել ենք պայքարի՝ պետության ստեղծում և ամրապնդում, Արցախի խնդրի լուծում, բանակի ստեղծում, հզորացում, ժողովրդավարության ամրապնդում, տնտեսական բարեփոխումներ, միջազգային հանրության կողմից Հայաստան պետության նկատմամբ վստահության ամրապնդում, տարածաշրջանի քաղաքական, տնտեսական գործընթացներին ակտիվ մասնակցություն:

Սկսվեց ծրագրային հիմնադրույթների և կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու աշխատանքային փուլ: Կուսակցության ծրագրային հիմնադրույթների մեջ վերջին փոփոխությունը կատարվել էր 1994թ.-ին, անցել էր 4 տարի, ծրագրային հիմադրույթները թարմացման կարիք ունեին: Իհարկե, ծրագրի էությունը մնացել է նույնը, սակայն կատարվել են զգալի հստակեցումներ և խմբագրական աշխատանք: Կանոնադրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջացավ: Պարզապես, ընթացքն արագացավ, քանի որ համալրվել էին հանրապետականների շարքերը, նոր կառույցներ էին ստեղծվելու: Անհրաժեշտ է ապահովել և ներկուսակցական դեմոկրատիան և կուսակցության ղեկավարման ավելի ճկուն ձևեր: Եթե մինչ փոփոխությունները համագումարն էր ընտրում կուսակցության նախագահին, և ներկայացուցչական ժողովը հաստատում էր նախագահի կողմից առաջադրվող խորհրդի անդամների թեկնածությունները, ապա փոփոխություններից հետո համագումարն է ընտրում խորհրդի անդամներին, և խորհուրդն իր կազմից ընտրում է կուսակցության խորհրդի նախագահ:

Մինչև 1998թ. աշուն հիմնականում մշակվեցին ծրագրային հիմնադրույթների և կանոնադրության մեջ նախատեսվող փոփոխությունները, որոնք ներկայացվեցին տարածքային կազմակերպությունների քննարկմանը: Ստացվել են բազմաթիվ առաջարկներ, որոնց մեծ մասն ընդունվել են:

Մեծ թափով ծավալվեցին կուսակցության համալրման կազմակերպչական աշխատանքները: Ստեղծվեցին կազմակերպչական հանձնաժողովներ, որոնք հստակ չափանիշներով սկսեցին կուսակցության նոր անդամների անդամագրումը: Չափանիշները հետևյալներն էին՝ թեկնածուն պետք է ունենա անբասիր անցյալ, պետք է վայելի իր շրջապատի, համայնքի բնակչության հարգանքը, վստահությունը, մինչ այդ այլ քաղաքական կառույցներում ակտիվ դեր ունեցած չլինի, ցանկանա զբաղվել ակտիվ քաղաքականությամբ, այլ ոչ դիպվածային՝ ընտրությունից ընտրություն, կարողանա իր ետևից տանել մարդկանց, ունենա կազմակերպչական ձիրք:

Կուսակցությանը անդամագրվեցին քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն ունեցող Երկրապահ կամավորականների միության բազմաթիվ անդամներ: Անհատներ, որոնք ազգային մտածողություն, պետական մտածողություն ունեն: Այսօրվա դրությամբ, կուսակցությունն ունի մոտ 5500 անդամ, բոլոր մարզերում ստեղծվել են մարզային, տարածքային կազմակերպություններ, կուսակցությունն ունի 57 տարածքային կազմակերպություններ, համայնքների մոտ 90%-ում ստեղծված են կուսակցության սկզբնական կազմակերպություններ: Մենք չենք ցանկանում կուսակցությունը վերածել մայրաքաղաքային կուսակցության: Կուսակցության անդամների մոտ 40 տոկոսն է Երևանից, մնացած անդամները հանրապետության մարզերից են: Կուսակցականների 20 տոկոսն ուսանողներ են:

Կուսակցությունը համալրվեց նաև Ազգային Ժողովի «Երկրապահ» պատգամավորական խմբի անդամների միջոցով: Այժմ «Երկրապահ» պատգամավորական խմբի 50-ից ավելի պատգամավորներ Հանրապետական կուսակցության անդամ են, նրանք ակտիվորեն մասնակցել են ինչպես տարածքային կազմակերպությունների ստեղծմանը, այնպես էլ Ազգային Ժողովում այն բոլոր կարևորագույն, առանցքային նախագծերի մշակմանը և պաշտպանմանը, որից կախված է մեր երկրի ու պետության ապագան:

Շատ կարճ ժամանակում արվեց ահռելի աշխատանք, և իհարկե, չի կարելի բացառել սխալները, բացթողումները: Հնարավոր է լինեն պատեհապաշտներ, կուսակցությունը իրենց անձնական նպատակների համար օգտագործել ցանկացողներ, այսինքն, մեր չափանիշներին չբավարարողներ, բայց կարծում եմ, դրանք շատ չեն և վստահ եմ, որ ժամանակի հետ բնական ինքնամաքրման պրոցեսը ցավագին չի լինի:

Կցանկանայի մի քանի խոսքով անդրադառնալ այն քաղաքական հետևանքներին, որ տեղի կունենան մեր համախմբման միջոցով: Այս քաղաքական ուժը հավակնում է վճռորոշ դեր ստանձնել ապագա քաղաքական զարգացումների համար: Մենք ցանկանում ենք Հայաստանի քաղաքական դաշտում զբաղեցնել ազգային կենտրոնամետ ուղղվածության դաշտը, նպաստել քաղաքական դաշտի հստակեցմանը, համախմբել կենտրոնամետ ուժերին, ստեղծել պայմաններ կուսակցությունների զարգացման համար: Մենք, որպես նախագահին սատարող քաղաքական ուժ, համարում ենք, որ նրա նախընտրական ծրագրի լիարժեք իրագործումը թույլ կտա լուծել մեր երկրի առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրները, իսկ դրա առաջին նախապայմանը մեր ուժերի համախմբումն է: Մոտակա մարտավարական խնդիրն է՝ Ազգային Ժողովի պատգամավորների ապագա ընտրություններում այնպիսի որակական մեծամասնություն կազմելն է, որը ի զորու կլինի մասնակցել հիմնախնդիրների լուծմանը, ունակ՝ կառավարության ձևավորմանը և նրա համար ապահովել խորհրդարանական աջակցություն:

Կարծում եմ, մենք այնքան ներուժ ունենք և այնքան կազմակերպված ենք, որ կարող ենք լուծել այդ խնդիրը: Ազգային Ժողովի կողմից ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումը, քաղաքական ուժերի հետագա ակտիվ մասնակցությունը օրենսգրքի նախագծի լրամշակմանը, հույս է ներշնչում, որ 1999թ. Ազգային Ժողովի պատգամավորների ընտրությունները տեղի կունենան փոխադարձ վստահության մթնոլորտում: Օրենսգիրքը քաղաքական որոշակի համաձայնության արդյունք է: Ժողովուրդը, քաղաքական ուժերը, միջազգային հանրությունը պետք է համոզվեն, որ ժողովրդավարական գործընթացները մեր երկրում անշրջելի են:

Մենք ցանկանում ենք և կնպաստենք ստեղծելու այնպիսի քաղաքական մթնոլորտ, որը կապահովի ընտրությունների նկատմամբ վստահությունը և՛ քաղաքական ուժերի, և՛ ժողովրդի կողմից: Մեր նպատակն այն է, որ ապագա քաղաքական գործընթացներում կուսակցությունն ունենա վստահության քվե: Եվ կարևորը ոչ միայն վստահությունն է, այլև պատասխանատվություն վերցնելու ունակությունը:

Բոլոր կուսակցությունների հետ Հանրապետական կուսակցությունն իր հարաբերությունները կառուցում է ազգային և պետական շահերի առաջնայնության սկզբունքով: Մենք կողմնակից ենք քաղաքական մրցակցության ազնիվ ձևերին, նպաստելու ենք այդպիսի ավանդույթների ձևավորմանը, պատրաստ ենք համագործակցել այլ կուսակցությունների հետ, չենք բացառում նախընտրական միավորումների կազմավորման հնարավորությունները: Մենք այս հարցերին կանդրադառնանք ավելի ուշ: Ընտրություններից առաջ, հավանական է, տեղի կունենա կուսակցության ևս մեկ արտահերթ համագումար կամ խորհրդի ընդլայնված նիստ՝ հաստատելու համար կուսակցության նախընտրական պլատֆորմը, ԱԺ պատգամավորության թեկնածուների ցուցակը, որոշելու կուսակցության մարտավարական գործելակերպը ընտրական պայքարում, համագործակցության ձևերը մյուս քաղաքական ուժերի հետ:

1999-ի նոյեմբերին տեղի են ունենալու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, և կուսակցությունը պատրաստվում է ակտիվորեն մասնակցելու նաև այդ ընտրություններին:

Մենք կարևորում ենք մտավորականության մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին:

Վերջին տարիներին մեր մտավորականությունը հիմնականում օտարված է եղել քաղաքական կյանքից: Հաշվի չի առնվել այն հսկայական մասնագիտական կարողությունները և հմտությունները, ներուժը, որը ունի մեր մտավորականությունը: Մեր նպատակն է մտավորականության համար ստեղծել քաղաքական գործընթացներին մասնակցելու, ինքնադրսևորման, Հայրենիքին ծառայելու լիակատար հնարավորություններ՝ անմիջականորեն կուսակցության կառույցների միջոցով: Այլապես, մտավորականությանը մնացել էր միայն քննադատությունը, որն իհարկե անհրաժեշտ է, բայց պարզ է նաև, որ սոսկ դրանով վիճակը չես բարելավի:

Կուսակցությանն անդամագրվել են բազմաթիվ մտավորականներ՝ գիտաշխատողներ, մանկավարժներ, բժիշկներ, տնտեսագետներ, տեխնիկական մտավորականության ներկայացուցիչներ: Նրանք ցանկություն են հայտնել մասնակցելու կուսակցության համապատասխան հանձնաժողովների աշխատանքներին, իրենց մասնագիտական գիտելիքները, փորձը ի նպաստ դնել կուսակցության աշխատանքներին՝ Ազգային Ժողովում օրինագծերի նկատմամբ կուսակցության դիրքորոշումների հստակեցմանը, նոր օրենքների նախագծերի մշակմանը, տնտեսության գիտության, կրթության բնագավառներում կուսակցության ծրագրերի մշակմանը և այլն:

Մենք հուսով ենք, որ մտավորականության ակտիվ գործունեությունը իր ծանրակշիռ ավանդը կունենա մեր պետության առջև ծառացած խնդիրները լուծելու գործում՝ մեր ազգի հոգեբանությանը համապատասխան:

Կուսակցությունն իր բոլոր նախորդ հրատարակություններով, իր գաղափարախոսությամբ մշտապես վարել է ազգային մշակույթի գերապատվության քաղաքականություն և այսուհետ ևս անառարկելիորեն նպաստելու է այն ամենին, ինչը խթան կհանդիսանա ազգային արժեքների, դպրոցի, լեզվի հեղինակության բարձրացմանն ու ծաղկմանը: Խնդիրն անչափ հրատապ է և պահանջում է ճիգերի ու նպատակամղված գործողությունների անհապաղ միավորում, այլապես մշտապես վտանգված կլինի մեր ապագան: Այս դրությունից դուրս գալու ելքը մենք պայմանավորում ենք ոչ միայն սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ու արժանավայել կեցություն ապահովելու անհրաժեշտությամբ, այլ որ ամենակարևորն է՝ ժողովրդի ոգու արիացմամբ, ազգային և մշակութային նոր զարթոնքով: Այս է լինելու մեր գերնպատակը մշակութային քաղաքականության իրականացման հետագա գործունեության ընթացքում, ինչի համար ջանք ու եռանդ չի խնայվելու, որովհետև մեծապես նաև դրանից է կախված մեր երկրի հետագա հզորացումն ու բարգավաճումը:

Մենք պատրաստ ենք տևական քաղաքական ակտիվ գործունեության և գիտակցում ենք, որ մեր երկրի ներքին կայունությունից, քաղաքական դաշտի ամրապնդումից է կախված պետության առջև կանգնած խնդիրների լուծումը՝ պետության անվտանգության ապահովում, արցախյան խնդրի լուծում, սոցիալական լարվածության թուլացում, տնտեսական բարեփոխումների ընթացքում տեղի ունեցած շեղումների ուղղում ու բարեփոխումների շարունակում, ժողովրդավարության սկզբունքների ամրապնդում, միջազգային հանրության կողմից Հայաստանին որպես վստահելի գործընկերոջ ընդունում:

Կուսակցության կազմակերպչական աշխատանքները շարունակվում են: 1998թ. նոյեմբերի 21-ին կուսակցության աշխատանքային խորհրդակցությունում շարժման լիդեր Վազգեն Սարգսյան կողմից ներկայացված քաղաքական և գաղափարական հարցադրումները քննարկվել են կուսակցության տարածքային կազմակերպությունների ընդհանուր ժողովներում, արժանացել են հավանության և կուսակցությունը պատրաստ է այդ խնդիրները լուծելու պատասխանատվությունը վերցնելու:

Մեր կուսակցությունը գաղափարի կուսակցություն է և ոչ թե պահի խնդիր լուծող ուժ: Խորհրդային տարիներին քառորդ դար ընդհատակում գործած քաղաքական ուժի՝ Ազգային Միացյալ Կուսակցության ազգային թևի ավանդույթներով, երդվյալ անդամների նախաձեռնությամբ և Աշոտ Նավասարդյանի գլխավորությամբ է ստեղծվել Հայաստանի

Հանրապետական կուսակցությունը, որի գործունեությունը, աշխարհայացքը բխում են Ազգի և Հայրենիքի հավիտենականության գաղափարից, որը պետք է ապահովի ազգային պետության իրողությամբ: Վերջին գործընթացների արդյունքում կուսակցությունը համալրվեց Երկրապահ կամավորական միության անդամներով:

Մարդիկ, որոնք վերջին տասը տարիների ընթացքում իրենց գործունեությամբ, իրենց մտածելակերպով և վերջապես իրենց արյան գնով ցույց տվեցին նվիրվածությունը ազգային խնդիրներին, պետության ստեղծմանը, նրա անվտանգության ապահովմանը, Արցախի ազատագրմանը, ազգային բանակի կայացմանը: Ունեն քաղաքական պատասխանատվության գիտակցում՝ այս ամենի պահպանման, հզորացման, զարգացման համար:

Բարդ իրավիճակներում, երկարատև քաղաքական ու ռազմի պայքարում իրենց լիովին հաստատած մեր երկու կազմակերպությունների ուժերի համախմբման արդյունքում ձևավորվում է գաղափարապես կայուն, պայքարի արդիական քաղաքական սկզբունքներով առաջնորդվող ուժեղ ու հզոր կուսակցություն, որը պատրաստ է իր վրա վերցնել քաղաքական պատասխանատվություն՝ պետության առջև ծառացած խնդիրները լուծելու համար:

Համոզված եմ, մեր համախմբված ուժը նաև այս անգամ պատվով կծառայի Հայրենիքին:

Վստահ եմ, որ այն քաղաքական ուղենիշները, որ կընդունի կուսակցության համագումարը, համահունչ կլինեն շարժման լիդեր Վազգեն Սարգսյանի կողմից ներկայացված հարցադրումներին:

Շնորհակալություն:

Հարակից ելույթներով հանդես եկան Ալբերտ Բազեյանը, Տիգրան Թորոսյանը, Սմբատ Այվազյանը, Յուրի Բախշյանը, Ռազմիկ Մարտիրոսյանը:

* * *

ՀՀԿ կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները ներկայացրեց Գագիկ Մինասյանը: Կուսակցության կանոնադրության մեջ արվող փոփոխությունների վերաբերյալ հարակից զեկուցումով հանդես եկան Գալուստ Սահակյանը, Գառնիկ Բաղալյանը:

ՀՀԿ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԳԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հանրապետականներ, հարգելի հյուրեր.

Իմ ելույթում ես նախ կանդրադառնամ Կուսակցության ծրագրային հիմնադրույթներում, ապա Կուսակցության կանոնադրությունում առաջարկվող փոփոխություններին:

Հանրապետական կուսակցության ծրագրային հիմնադրույթներն ընդունվել են 1995 թվականին, կուսակցության երկրորդ արտահերթ համագումարում:

Կուսակցության չորրորդ համագումարում ծրագրային հիմնադրույթները ընդգրկվեցին կուսակցության կանոնադրության մեջ՝ կազմելով նրա առաջին չորս հոդվածները:

Այսօր համագումարի քննարկմանը ներկայացվող ծրագրային հիմնադրույթները ևս ընգրկված են կուսակցության կանոնադրության մեջ և կազմում են նրա երրորդ հոդվածը:

Ծրագրային հիմնադրույթների ներկայացվող խմբագրությունը գաղափարական և քաղաքական առումով խարսխված է կուսակցության գործող ծրագրային հիմնադրույթների վրա:

Ծրագրային հիմնադրույթները կառուցված են Ազգի և Հայրենիքի հավիտենականության սկզբունքների գերակա արժեքների վրա: Կուսակցության գլխավոր նպատակ և խնդիր է հռչակվում հայոց ազգային անկախ պետականության հաստատումն ու ամրապնդումը: Այս

հիմնարար սկզբունքները եղել ու մնում են Հայաստանի Հանրապետական կուսակցության գաղափարական առանցքը, հավատամքը:

Նոր խմբագրությունը ավելի է համապատասխանեցվել «հիմնադրույթներ» տերմինի պահանջներին, ինչը ենթադրում է առավել հակիրճություն և հստակություն: Այդ պատճառով ներկայացվող տարբերակում տեղ չեն գտել լրացուցիչ պարզաբանումներ պահանջող որոշ գաղափարներ և ձևակերպումներ: Մենք գտնում ենք, որ այդ հարցերին անհրաժեշտ կլինի անդրադառնալ առաջիկայում, երբ ծրագրային հիմնադրույթների հիման վրա կմշակվի կուսակցության ծրագիրը:

Փաստաթղթից հանված է կուսակցության ձևավորմանն ու կայացմանը նվիրված բաժինը, քանի որ ծրագրային հիմնադրույթների ընձեռած սուղ պայմաններում հնարավոր չէր հավուր պատշաճի ներկայացնել այդ հարցերը: Կարծում եմ, որ մենք առաջիկայում հնարավորություն կունենանք այդ հարցերին անդրադառնալ մի առանձին փաստաթղթով:

Փաստաթղթից հանված են նաև այնպիսի դրույթներ, որոնց իրականացումը տեղի է ունեցել մեր անկախ պետականության նախորդ տարիների ընթացքում: Ասվածը, մասնավորապես, վերաբերում է ազգային դրամանիշի լիարժեք կիրառության ապահովմանը, տարադրամի օգտագործման շրջանակների պետական կանոնակարգմանը:

Միաժամանակ կուսակցության և մեր անկախ պետության զարգացման նախորդ տարիների փորձը թույլ են տվել ծրագրային հիմնադրույթների նոր խմբագրության մեջ հստակեցնել և առավել իրատեսական ու ընկալելի տեսքի բերել մի շարք ձևակերպումներ: Ասվածը, մասնավորապես, վերաբերում է երկրի արտաքին քաղաքականության ուղղվածությանը, քաղաքացիների պաշտպանվածությանը և սոցիալական հարցերի լուծմանը:

Փաստաթղթի 3.7 կետը սահմանում է.

Հայոց պետության գլխավոր հարստությունը մարդն է՝ իր ֆիզիկական, մտավոր և բարոյական անսահման ներուժով: Պետության կարևորագույն խնդիրն է յուրաքանչյուր ընտանիքի և անհատի, հետևաբար և Ազգի արժանավայել կեցությունը: Պետությունը պետք է երաշխավորի իր քաղաքացիների անվտանգությունը, պաշտպանի նրանց արժանապատվությունը, ապահովի անհատի իրավունքների և ազատությունների զարգացումը, կարողությունների լիարժեք իրացումը: Պետությունը պետք է արդյունավետ միջոցառումներ իրականացնի իր քաղաքացիներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ, երաշխավորի նրանց կենսապահովման պայմանների բավարարումը, ըստ արժանավույն գնահատի իր քաղաքացիների վաստակը Հայրենիքի առջև:

Նման հստակ ձևակերպումներ են տրված պետության տնտեսական, պաշտպանական, կրթական, գիտական, մշակութային համակարգերի վերաբերյալ:

Տնտեսությանը նվիրված հատվածում, մասնավորապես, շեշտվում է, որ պետությունը պետք է ապահովի պետական և մասնավոր հաստատությունների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ՝ որպես սեփականության բազմաձևության և տնտեսության բնականոն զարգացում երաշխավորող շուկայական տնտեսական հարաբերությունների ամրապնդման հավաստիք:

Սրանք, հիրավի, կենտրոնամետ քաղաքական ուժի ձևակերպումներ են, մի ուժի, որի ամբողջ հզորությամբ երկրի քաղաքական դաշտ մտնելու հրամայականը ժամանակի պահանջն է, և այդ գաղափարախոսության ու քաղաքականության իրականացման խնդիրը իր ուսերի վրա է վերցնում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը:

Հարգելի հանրապետականներ, անհրաժեշտ եմ համարում նշել, որ ներկայացվող ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ կուսակցության խորհուրդը բազմաթիվ առաջարկություններ է ստացել կուսակցության տարածքային կազմակերպություններից: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ այդ առաջարկությունների ճնշող մեծամասնությունը վկայում է մեր կուսակիցների բարձր գաղափարական և քաղաքական պատրաստվածության մասին: Կուսակցության խորհուրդը քննարկել է այդ առաջարկությունները, դրանց զգալի մասը իր տեղն է գտել ծրագրային հիմնադրույթների ձեր քննարկմանը ներկայացված տարբերակում:

Առաջարկությունների մի մասը չի ընդունվել միայն այն պատճառով, որ դրանք դուրս

են գալիս «հիմնադրույթներ» տերմինով սահմանափակվող խիստ շրջանակներից: Բայց հենց այդ առաջարկությունները պարարտ հող պետք է հանդիսանան այն աշխատանքների համար, որ պետք է ծավալվի առաջիկայում՝ այս հիմնադրույթների հենքի վրա կուսակցության ծրագրի մշակման ժամանակ:

Ես համոզված եմ, որ շատ շահեկան առաջարկություններ կարվեն նաև այսօր ծավալվելիք քննարկումների ժամանակ, որոնք նույնպես խորությամբ կուսումնասիրվեն և կօգտագործվեն կուսակցության ծրագրի մշակման ժամանակ:

Այսքանը կուսակցության ծրագրային հիմնադրույթներում առաջարկվող փոփոխությունների մասին:

Կուսակցության կանոնադրությունում առաջարկվող փոփոխությունների մասին:

Հանրապետական կուսակցության գործող կանոնադրությունը հաստատվել է 1998 թվականին, կուսակցության չորրորդ համագումարում:

Այսօր համագումարի քննարկմանը ներկայացվող կուսակցության կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները, ըստ էության, նպատակ ունեն արձանագրելու և կանոնակարգելու այն իրողությունները, որոնց նախաձեռնողն ու իրականացնողն ենք եղել մենք բոլորս: Դա կուսակցության հզորացման և ներկուսակցական ժողովրդավարության նոր, ավելի բարձր մակարդակի իրողությունն է, նպատակներ, որոնց Հայաստանի Հանրապետական կուսակցությունը հետամուտ է եղել իր հիմնադրման օրից:

Առաջարկվող փոփոխությունները քննարկվել են կուսակցության տարածքային կազմակերպություններում: Տարածքային կազմակերպություններից ստացվել են բազմաթիվ առաջարկություններ, որոնց զգալի մասն ընդունվել է:

Որոնք են կուսակցության կանոնադրությունում առաջարկվող հիմնական փոփոխությունները և դրանց հիմնավորումները:

- Փոփոխվել է կուսակցության սկզբնական կազմակերպության անդամների նվազագույն թվաքանակը՝ այն 5-ից բարձրացել է 15-ի:

Մեր համոզմամբ, այս փոփոխությունը թույլ կտա մեծացնել սկզբնական կազմակերպությունների հզորությունը և հնարավորություն կստեղծի ավելի արդյունավետ իրագործել սկզբնական կազմակերպությունների առջև դրվելիք լուրջ ու պատասխանատու խնդիրները:

- Ավելացվել են նոր կառույցներ՝ կուսակցության մարզային կազմակերպություն և կուսակցության մարզային կազմակերպության խորհուրդ: Կուսակցության մարզային կառույցը իր մեջ ներառում է մարզի տարածքում գործող տարածքային կազմակերպությունները: Մարզային կազմակերպության խորհուրդը կազմվում է մարզի տարածքում գործող տարածքային կազմակերպությունների նախագահներից: Մարզային խորհուրդը իր կազմից ընտրում է կուսակցության մարզային կազմակերպության նախագահ:

Կուսակցության մարզային կազմակերպությունների և մարզային կազմակերպությունների խորհուրդների ձևավորման անհրաժեշտությունը ուղղակիորեն բխում է կուսակցության շարքերի առկա հզորացումից: Այս նոր ստեղծվող կառույցները թույլ կտան ավելի արդյունավետ իրականացնել կապը կուսակցության խորհրդի և կուսակցության 57 տարածքային կազմակերպությունների միջև: Այս օղակները ավելի մոտ լինելով տեղերին՝ պետք է իրենց վրա վերցնեն առաջադրվող խնդիրների հստակեցման ու տեղայնացման և տեղերում ծագող հարցերի լուծման ծանրության մի զգալի մասը: Պետք է նոր խթան հանդիսանան կուսակցության տարածքային և սկզբնական կազմակերպությունների հզորացման և արդյունավետ գործունեության համար:

- Վերացված է ներկայացուցչական ժողովի ինստիտուտը:

Կուսակցության տարածքային կազմակերպությունների թվաքանակի էական աճը և մարզային կազմակերպությունների խորհուրդների առկայությունը աննպատակահարմար են դարձնում ներկայացուցչական ժողովի առկայությունը: Ներկայացուցչական ժողովի

խնդիրները, ըստ էության, պետք է կատարի կուսակցության խորհրդի ընդլայնված նիստը: Խորհրդի ընդլայնված նիստի գաղափարը ևս նորույթ է կանոնադրությունում: Խորհրդի ընդլայնված նիստին պետք է մասնակցեն կուսակցության մարզային խորհուրդների անդամները, փաստորեն, բոլոր տարածքային և մարզային կազմակերպությունների ղեկավարները: Համաձայն կանոնադրության, կուսակցության խորհրդի ընդլայնված նիստի քննարկման և որոշման առարկա պետք է դառնան կուսակցության գործունեության բոլոր կարևորագույն խնդիրները:

- Փոփոխվել է կուսակցության խորհրդի ձևավորման սկզբունքը, վերացվել է կուսակցության նախագահի ինստիտուտը: Կուսակցության խորհրդի անդամների թիվը որոշում է համագումարը, կուսակցության խորհուրդը ընտրվում է համագումարում փակ քվեարկությամբ: Կուսակցության խորհուրդը իր կազմից ընտրում է կուսակցության խորհրդի նախագահին: Կուսակցության խորհրդի նախագահն ունի նույն իրավասությունները, ինչ գործող կանոնադրությամբ կուսակցության նախագահը:

Այս վերջին խումբ փոփոխությունները ամբողջությամբ բխում են ներկուսակցական ժողովրդավարության ավելի բարձր մակարդակի արմատավորման հրամայականից:

Սրանք էին այն հիմնական փոփոխությունները, որ առաջարկվել են կուսակցության կանոնադրության մեջ ու ներկայացվել ձեր քննարկմանը:

ՀՀԿ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի կուսակիցներ,

Բնականաբար, անկեղծ հղած մեր ողջույններին զուգընթաց մեզանում ամբողջանում են մտքեր, որոնք արդյունք են ոչ միայն համագումարի ամբողջ մթնոլորտի հետ կապված ոգևորությունների, այլև տարիների ընթացքում ձևավորված սկզբունքների:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ի սկզբանե որդեգրել է ազգային գաղափարախոսությունը և այդ հենքի վրա էլ այնուհետ կառուցել իր քաղաքական դիմագիծը, առավել ևս ազգային գաղափարախոսությունը՝ անընդմեջ մշակվելով, դարձել է կուսակցության ծրագրային խնդիրների ամբողջացման գործոն:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը իր հիմնադրման ժամանակաշրջանից մինչև օրս հանդես է եկել իրատեսական, ժամանակի խնդիրները իր մեջ ներառած ծրագրային խնդիրներով և վերջին ամիսների քննարկումներն էլ ոչ թե կապված են եղել գաղափարական սկզբունքների փոփոխման կամ նորացման հետ, այլ ընդհակառակը, ավելի հստակ և մատչելի ձևակերպումներով հնարավոր է դարձել ավելի տեսանելի և ըմբռնելի կատարելության հասցնել ծրագրի ամբողջ գաղափարը և գաղափարախոսությունը: Ըստ ինձ, գնահատելի է, որ ծրագրում ոչ թե փորձ է արվել սահմանել ազգային գաղափարախոսությունը, ինչպես ցանկանում են այսօր անել ոմանք, այլ կոնկրետ խնդիրների և ծրագրերի միջոցով առաջադրել պայմաններ, որոնք, իրոք հասու են լուծելու մեր ազգային, ազգային պետության և պետականության զարգացումների պրոցեսները, ներազդելու ազգային իդեալների ըմբռնումների շրջանակների վրա՝ տնտեսության համընթաց ազատականացում, շուկայական

հարաբերությունների զարգացում, գիտության, կրթության, մշակույթի բարեփոխումների և կառուցվածքների աստիճանական առաջընթացություն, ազգային արժեքների վերագնահատում և համամարդկային իրողությունների վերաիմաստավորում:

Թերևս, հնարավոր եմ համարում և գտնում, որ համագումարը այդ հանձնարարականը կտա, առաջիկայում կուսակցության ծրագրում առաջադրված սկզբունքները վերածել տնտեսական համալիր ծրագրերի:

Կուսակցության ծրագրային խնդիրները համահունչ են մեր ազգային ծրագրերին և ապահովում են, որ շատ կարևոր է, թե զարգացման ընթացք, և թե ազգային իդեալի իրագործման ճանապարհ:

Որոշակի փոփոխություններ է առաջադրված նաև կուսակցության կանոնադրությունում, որ, ըստ ինձ, կանխորոշված է այսօրվա խնդիրներով: Մարզային պետական կառուցվածքը, բնականաբար պետք է ենթադրեր, որ կուսակցությունը տարածքային քաղաքականություն վարելու նպատակով անհրաժեշտաբար ներառելու է մարզային տարածքային կառույց ունենալու խնդիրը:

Հաջորդ փոփոխությունը այն է, որ կուսակցության խորհուրդը ընտրվում է համագումարում: Կուսակցության նախագահն ընտրվում է խորհրդի կողմից բաց քվեարկությամբ: Ըստ իս, սա ավելի կոնստրուկտիվ է և հնարավորություն է տալիս ավելի կոլեգիալ ձևով առաջացած խնդիրները քննարկել, առավել ևս որոշումներ կայացնել: Վերջապես, Խորհրդի անդամների լիազորությունների ավելացման հետ միասին, ապահովվում է նաև խորհրդի անդամի անկաշկանդվածությունը:

Ըստ փոփոխությունների, սկզբնական կազմակերպությունը բաղկացած է առնվազն 15 անդամներից: Գտնում եմ, որ կուսակցության գործունեության խնդիրների և դրանց կատարման համընդհանուր պրոցեսների զարգացման ընթացքում 15 թիվը գնալով կմեծանա:

Դա էապես կապված կլինի կուսակցության հետագա ճանաչողությունից:

Ուզում եմ կուսակիցներիս հավատացնել, որ Հայաստանի Հանրապետական կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը տարիների քննության ճանապարհով է անցել և իրապես ի զորու է կանխորոշել կուսակցության հետագա գործունեությունը: Եվ, ինչպես նշված է ծրագրում, մեր գործունեությունը կտանի «Ազգի և Հայրենիքի հավիտենականության գաղափարների» ճանապարհով:

Այն իրապես կդառնա կենսական ուժի, Ազգի և պետության «ռազմավարական և մարտավարական խնդիրների լուծման հիմք»:

Ես ոգեկոչում եմ համագումարի բոլոր պատվիրակներին՝ հետագա մեր գործունեության գաղափարական և քաղաքական զարգացումների ծրագիրն ու կանոնադրությունը ընդունել և հավատալ, որ, իրոք, բոլոր ճանապարհներից, առաջադրված ծրագիրը միակն է կամ ամենալավագույնն է, որն ընտրել ենք պատասխանատվությամբ, և որը կանխակալում է առաքելություններով ամբողջացած ապագա:

ՀՀԿ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԳԱՌՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Հարգելի հանրապետականներ, հարգելի հյուրեր.

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետական կուսակցության 1994 թվականից գործող ծրագիրը և կանոնադրությունը նորովի մշակված այսօր ներկայացվում է համագումարի քննարկմանը և հաստատմանը:

Ես իմ ելույթում կանդրադառնամ ծրագրային հիմնադրույթներին:

Գործող ծրագրի հենքի վրա ստեղծված և այսօր ձեզ ներկայացվող ծրագրային հիմնադրույթները մշակվել և քննարկվել են կուսակցության բոլոր կառույցների և առանձին անհատների կողմից:

Ծրագրային հիմնադրույթները ընդգրկված են կուսակցության կանոնադրության մեջ և ներկայացված են 3.1-ից 3.12 կետերով:

Հիմնադրույթները լիովին արտահայտում են մեր կուսակցության, որպես ազգային կենտրոնամետ քաղաքական ուժի աշխարհայացքը և գործունեության ծրագիրը, և ուղեցույց պետք է հանդիսանան մեզ համար պետության հզորացման և ազգի բարգավաճման խնդիրներն իրագործելիս:

Հիմնադրույթների գաղափարական հիմքը և՛ նախկինում, և՛ հիմա նույնն է՝ ազգային գաղափարախոսությունը, որը Հայոց պետությունն է համարում միակ հիմնական գրավականը՝ ողջ հայության գոյատևման և զարգացման համար: Սրանով պետք է առաջնորդվի Հանրապետական կուսակցությունը և նրա յուրաքանչյուր անդամ:

Ծրագրային հիմնադրույթների 3.2 կետում նշվում է Հայ առաքելական եկեղեցու կարևոր դերը, որն իր ազգային աշխարհասփյուռ կառույցներով նպաստել է և կնպաստի հայության միասնության պահպանմանը:

Հիմնադրույթների 3.3 կետում մատնանշված է մյուս քաղաքական ուժերի և անհատների հետ Հանրապետական կուսակցության համագործակցության գլխավոր պայմանը՝ դա Ազգի և Պետության շահերի գերակայությունն է:

Առանձին կետերով նշված են պետության արտաքին և տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ կուսակցության տեսակետը: Արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշ է սահմանվում միջազգային հանրության հետ բնականոն ինտեգրացումը և այլ երկրների հետ փոխշահավետ կապերի զարգացումը:

Ծրագրային հիմնադրույթները ձևակերպում են նաև ներկա ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից դուրս գալու ուղղությունները: Կարևորվում է շուկայական հարաբերությունների դերը տնտեսության վերականգնման ու զարգացման հարցում, ինչը հուսալի երաշխիք կհանդիսանա յուրաքանչյուր ընտանիքի և անհատի բարեկեցության համար:

Հիմնադրույթներում շեշտվում է, որ պետությունը պետք է ապահովի բարենպաստ պայմաններ սփյուռքահայության ներուժի համախմբման և նրա արժանապատիվ գոյատևման համար: Վերջնական նպատակ է համարվում սփյուռքահայության վերադարձը հայրենիք:

3.9 կետը շարադրում է պետության անվտանգության ապահովման, բանակի ռազմական և բարոյահոգեբանական հզորության բարձրացման վերաբերյալ Հանրապետական կուսակցության դիրքորոշումը:

Հիմնադրույթների 3.10, 3.11 և 3.12 կետերում ձևակերպվում են կրթության և մշակույթի համակարգերի զարգացման և նրանց պետության ու ազգի շահերին ծառայեցնելու խնդիրները: Ամեն ինչ պետք է ծառայեցվի պետության և ազգի հզորացման գերխնդրին:

Կուսակցության Ծրագրային հիմնադրույթները հնարավոր չէ նույնիսկ համառոտ կերպով ներկայացնել և վերլուծել մեկ կամ մի քանի ելույթներում: Հիմնադրույթներում ամրագրված սկզբունքները հետագայում կդառնան ծրագրեր կուսակցության և նրա յուրաքանչյուր անդամի գործունեության համար:

Եվ թող ամեն մի հանրապետական իր սեփական ուժով և հավատով նվիրվի այդ ծրագրերի իրագործմանը, ոչ թե խոսքով, այլ՝ գործով:

Շնորհակալություն:

Կանոնադրության նախագիծը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

* * *

ՀՀԿ 5-րդ արտահերթ համագումարի որոշումը ՀՀԿ կանոնադրության / ծրագրի/ փոփոխությունների մասին

ՀՀԿ 5-րդ արտահերթ համագումարը, քննարկելով ՀՀԿ ծրագրային հիմնադրույթները և կանոնադրական փոփոխությունները,

որոշեց

Հաստատել ՀՀԿ կանոնադրության /ծրագրի/ փոփոխությունները:

* * *

Առաջարկվեց ՀՀԿ խորհրդի թվակազմը սահմանել 25 հոգի: Առաջարկը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Սրանով համագումարն ավարտեց առաջին օրվա աշխատանքները:

* * *

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը հունվարի 30-ին, շարունակելով 5-րդ արտահերթ համագումարի աշխատանքները, ընտրեց կուսակցության ղեկավար մարմիններ՝ կուսակցության խորհուրդ և կուսակցության խորհրդի նախագահ:

Կուսակցության խորհրդի կազմում ընտրվեցին համագումարի հետևյալ 25 պատվիրակները.

1. Անդրանիկ Մարգարյան (ԱԺ պատգամավոր)
2. Կարեն Ադոնց
3. Սմբատ Այվազյան (ԱԺ պատգամավոր, հարկային տեսչության պետ)
4. Գառնիկ Բաղալյան
5. Ալբերտ Բազեյան (ԱԺ փոխնախագահ)
6. Յուրի Բախշյան (ԱԺ փոխնախագահ)
7. Գագիկ Գագյան
8. Դավիթ Զադոյան (տարածքային կառավարման և օպերատիվ հարցերի նախարար)
9. Վահան Զատիկյան (ԱԺ պատգամավոր, Մալաթիա-Սեբաստիա համայնքի ղեկավար)
10. Ֆիրդուս Զաքարյան (տարածքային կառավարման և օպերատիվ հարցերով փոխնախարար)
11. Արտակ Զեյնալյան (առողջապահության փոխնախարար)
12. Ռազմիկ Զոհրաբյան
13. Տիգրան Թորոսյան
14. Գուրգեն Խաչատրյան
15. Արա Կետիկյան
16. Ալեքսան Հարությունյան (ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար)
17. Արարատ Մալխասյան
18. Սերգեյ Մանուկյան

19. Ռազմիկ Մարտիրոսյան (ԱԺ պաշտպանության, ՆԳ և ԱԱ մշտական հանձնաժողովի նախագահ)
20. Գագիկ Մինասյան (ԱԺ պատգամավոր, ՀՀ վարչապետի խորհրդական)
21. Մկրտիչ Մկրտչյան
22. Գալուստ Սահակյան (ԱԺ գիտության, կրթության, երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ)
23. Վլադիմիր Սարգսյան
24. Սամվել Սարգսյան
25. Արամ Սիմոնյան

ՀՀԿ խորհուրդն այնուհետև իր նիստում նախագահ ընտրեց Անդրանիկ Մարգարյանին, որը մինչ այդ Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահն էր:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ես Խորհրդի կողմից շնորհակալություն եմ հայտնում պատվիրակներին վստահության քվե ստանալու համար, ինչպես նաև խորհրդի անդամներին՝ այս պաշտոնը վստահելու համար: Ուզում եմ համոզմունք հայտնել, որ նորընտիր խորհուրդը կփորձի համագումարի ժամանակ առաջ քաշված խնդիրներն իրականացնել:

Մենք պատասխանատվությունը մեզ վրա վերցրեցինք՝ չսպասելով, որ այն մեզ տան: Դրա համար մենք պատասխանատու ենք Աստծո առաջ, մեր ընկերների առաջ, մեր խղճի առաջ:

Շնորհակալություն վստահության համար:

* * *

ՀՀԿ համագումարի 2-րդ օրը զուգադիպեց Ստեփան Զատիկյանի գնդակահարության օրվան, և համագումարի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին նրա հիշատակը:

Ելույթով հանդես եկավ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Վազգեն Սարգսյանի ելույթը ՀՀԿ 5-րդ արտահերթ համագումարում

Ողջունում եմ ՀՀԿ նորընտիր խորհրդին, խորհրդի նախագահ պարոն Մարգարյանին: Ցանկանում եմ անմնացորդ աշխատանք, անքուն գիշերներ, մաքառում: Ցանկանում եմ, որպեսզի անձնական օրինակով, որովհետև միայն անձնական օրինակով հնարավոր է մեկ մարդ տանել, ուր մնաց թե ամբողջ կուսակցություն՝ բազմահազարանոց, անձնական օրինակով կարողանանք ոգևորել, քաջալերել և մեր ետևից տանել բազմահազարանոց այս կուսակցությունը:

Ես շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքական ուժերին: Թող տարօրինակ չթվա, իսկապես շնորհավորում եմ, չնայած նրանցից շատերը, հասկանալի է, վերջին օրերի քաղաքական տեղատվություններից բավականին հոգնել էին և իրենք շնորհավորելու հնարավորություն չունեցան: Ես շնորհավորում եմ նրանց և ասեմ, թե ինչու: Շնորհավորում եմ, որովհետև այս կուսակցությունը, այս շարժումը չի ստեղծվել ձեր դեմ, չի գործելու ձեր դեմ, գործելու է ձեզ հետ միասին: Եվ եթե կամքներս ու համբերություններս ների, և եթե Աստված կամենա, փորձելու ենք ստեղծել վերկուսակցական մի շարժում, որ բոլորիդ փոխարեն բոլորիդ արժանիքները գնահատելու և իր չափով պատմական կտրվածքով, պատմական կտավի վրա լավին ու վատին տեր է կանգնելու: Որովհետև քաղաքական բոլոր տեսությունները, գաղափարական սիստեմներն ու կուսակցական կրքերը անցողիկ են: Կա ազգային շահերի երկաթյա օրենք: Իսկ ազգը, պետությունը միայն կուսակցությունները չեն: Դա նույնիսկ այս ժամանակահատվածում, այս փոքրիկ հողի վրա ապրող 4 միլիոն հայերս չենք: Ազգը հանդես է գալիս հազարամյա անցյալում և ապագայում, որոնք միստիկական հավատի և մնայուն արժեքների միավորման մեջ ստեղծում են Հայաստանի կերպարը և տեղը այս արևի տակ: Մինչդեռ, ցավոք, մենք այնքան ենք մանրացել, այնքան ենք դառել օրվա կրքերի ու քաղաքական կոնյուկտուրայի գերին, որ կորցրել ենք անցյալի և ապագայի զգացողությունը, վտանգի զգացողությունը: Մեր ներքին ժանգը մեզ ներսից ուտում ու պառակտում է մեզ, պառակտում է մեր ժողովրդին: Ժողովուրդը կորցնում է հավատն իր ներուժի նկատմամբ, և սա ամենասարսափելին է: Մեր արած լավ գործերն անգամ մենք չենք կարողանում նկատել: Բացասման բացասումը մեր տունը քանդում է կամ կարող է քանդել: Իրականում մենք շատ ավելի լավն ենք, քան ինքներս մեզ ներկայացնում ենք աշխարհին: Դրեք ուրիշ ժողովրդի մեր վիճակում և դիտարկեք հենց միայն անցյալ հարյուրամյակի կտրվածքով: Առաջին համաշխարհային պատերազմ՝ պետականության լիակատար բացակայության պայմաններում, Հայոց մեծ եղեռն, հեղափոխություն, համաշխարհային երկրորդ պատերազմ, Հայրենական մեծ պատերազմ, արցախյան պատերազմ, երկրաշարժ: Եվ այդ ամենից հետո մենք 21-րդ դար ենք մտնում բացարձակ դրական հաշվեկշռով՝ Հայոց անկախ պետականությամբ, հայացած Հայաստանով, որ ես նույնքան կարևոր, կամ ինձ կներեք, ավելի կարևոր եմ համարում, քան Հայաստանի անկախացումը, ազատագրված Արցախով, ռազմական հաղթանակներով, որ դարերով չենք ունեցել, կայացած ամուր բանակով: Ուրեմն դառնանք ու փառաբանենք մեր հերոս ժողովրդին:

Դառնանք ու փառաբանենք Հայաստանի Առաջին Հանրապետությունը կերտողներին: Այսօր հեշտ է խոսել նրանց մասին, հեշտ է խոսել սխալների մասին: Սխալների մասին այնքան ենք խոսել արդեն, այնքան ենք մեկս մյուսին մերժել, որ երբեմն անգամ անունները տալ մարդիկ չեն համարձակվում: Իրականում հանրապետություն կերտողները մեծապատիվ մարդիկ էին, գաղափարի մարդիկ էին: Եվ ես չեմ պատկերացնում, եթե չլիներ առաջին Հանրապետությունը, թերևս, Հայաստանի սովետականացման ժամանակ Հայաստանի Սովետական Հանրապետությունը հանրապետության կարգավիճակ չունենար: Որովհետև բազմաթիվ ժողովուրդներ կային, որ և՛ քանակով, և՛ տարածքով մեզանից մեծ էին, բայց Սովետական Միության կազմում հանրապետության կարգավիճակ չունեցան:

Եվ դժվար է այսօր պատկերացնել, եթե չլիներ քաղաքական կամք, այդ խառնիճաղանջ ժամանակահատվածում հնարավո՞ր էր, արդյոք, Հայաստանի այս փոքր հատվածը փրկել:

Մարդիկ կարողացան Սարդարապատ կազմակերպել, մարդիկ կարողացան Հանրապետություն ստեղծել, որը դարձավ մեր ապագա բոլոր հանրապետությունների հիմքը: Եվ, քանի որ մեր հանրապետությունները միշտ կուսակցականացվել են, առաջին հանրապետությունը համարվում է դաշնակցական: Չի կարելի չշեշտել նաև այն մեծ դերը, որ դաշնակցական կուսակցությունն ունեցավ Սփյուռքի պահպանության գործում: Այս մասին չի խոսվել, բայց այդ դերը չափազանց մեծ է, և չի կարելի դա չգնահատել և չի կարելի չօգտագործել Դաշնակցության հիրավի համաշխարհային կառույցը:

Ուրեմն, դառնանք ու փառաբանենք Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն կերտողներին: Հիշենք, ի՞նչ ունեինք մենք: Երբեմն խոսում ենք մեր պապերի թողած ժառանգության մասին, անցյալի փառքի մասին: Բացի մեր

հիշողություններից, բացի մեր մշակույթից, ըստ էության, ոչինչ թողնված չէր: Եվ 70 տարիների ընթացքում, որի մասին ամեն վատն արդեն ասել ենք, Հայաստանի Սովետական Հանրապետություն կերտողները կարողացան, արանքում հաղթելով համաշխարհային երկրորդ աշխարհամարտում՝ աշխարհի ամենադաժան պատերազմում, այնուամենայնիվ, 70 տարվա ընթացքում կարողացան ստեղծել հզոր տնտեսություն, հզոր մշակույթ, որպիսին մենք երբևէ չենք ունեցել: Եվ քիչ էր մնացել արդեն՝ այդ մարդկանց մենք դասելու էինք դավաճանների շարքը: Չգնահատել նրանց ձեռքբերումները, չգնահատել նրանց արածը՝ ուղղակի սրբապղծություն է:

Ուրեմն դառնանք ու փառաբանենք Հայաստանի նորօրյա պատմություն, պետականություն կերտողներին: Յուրաքանչյուր պետության մասին, պատերազմող պետության մասին առաջին հերթին դատում են պատերազմի արդյունքներով՝ հաղթեցի՞նք պատերազմում, թե ոչ, երկիրը պահպանեցի՞նք, թե ոչ, սահմանները պաշտպանեցի՞նք , թե ոչ: Շագրենի կաշու պես փոքրացած այս պետությունն ի վերջո սպառվե՞ց, թե՞ պաշտպանվեց ու հաղթանակներ տարավ: Եվ եթե այս տեսանկյունով ենք դատում, ապա այստեղ մենք ունենք մեծագույն ձեռքբերումներ, հաղթանակներ, որ դարերով չէինք ունեցել: Եվ չգնահատել այս ձեռքբերումները, դա նմանապես սրբապղծություն է: Չգնահատե՞լ, որ այս ժամանակահատվածում մենք կարողացանք իսկապես անկախ երկիր ունենալ, իսկապես ամուր բանակ ունենալ: Սրանք մնայուն ձեռքբերումներ են, այս ամենը չգնահատելը սրբապղծություն է:

Վերջապես, Հայաստանի հաստատման խնդիրը: Այն պրոցեսը, որը սկսվել էր Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակ, Նժդեհի, Դրոյի օրոք, ավարտվեց Հայաստանի 3-րդ հանրապետության ժամանակ: Սա չափազանց կարևոր խնդիր է: Ահա այս վիճակում ենք մենք գտնվում: Մենք ունեցել ենք բազմաթիվ սխալներ, կրկնում եմ, սխալներից պիտի դասեր քաղել: Բայց մեկս մյուսին սևացնելով, աշխարհին ներկայացնելով մեր ժողովրդի միայն վատը, մենք կործանարար քայլ ենք կատարում մեր նկատմամբ: Սխալներից դասեր քաղենք, բայց չսևացնենք, չոչնչացնենք իրար և պատմական կտրվածքով մեր ձեռք բերածը: Դաշնակները քննադատում էին կոմունիստներին, կոմունիստները՝ դաշնակներին: Հետո ՀՀՇ-ն եկավ, միանգամից քննադատեց և՛ կոմունիստներին, և՛ դաշնակներին: Հիմա դաշնակները կոմունիստների հետ միացել և քննադատում են ՀՀՇ-ին: Եվ այդպես շարունակ: Եվ, ի վերջո, հասնելու ենք այն վիճակին, որ այս երկիրը, այս ժողովուրդը մտածելու է՝ վերջապես կա՞ն այս ժողովրդի մեջ ոչ դավաճաններ: Արդյունքում սևանում են նաև ազգային բացարձակ ձեռքբերումները: Արդյունքում արդեն ժողովուրդն սկսել է չհավատալ իր բացարձակ արժեքներին, չի հավատում անկախությանը, չի հավատում հաղթանակներին:

Աշխարհի ոչ մի ժողովուրդ պատերազմ չի սիրում: Բայց աշխարհի ոչ մի ժողովուրդ նաև չի ատում իր հաղթանակած պատերազմը: Պատերազմի նկատմամբ տոտալ, համաժողովրդական ատելությունը հղի է նոր պատերազմների և կործանման վտանգով: Մենք մեր ժողովրդին հնարավորություն չտվեցինք գնահատել անգամ իր հաղթանակած պատերազմը: Արդյունքում հասել ենք արդեն սիմվոլների ոչնչացմանը: Մայիսի 28-ը դաշնակներինն է՝ չենք տոնում, սեպտեմբերի 21-ը ՀՀՇ-ինն է՝ չենք տոնում, Սահմանադրությունը Լևոնինն է՝ մերը չէ: Այս շարժումը մտադիր է վերցնել այն ամբողջ դրականը, որ հարյուրամյակի կտրվածքով ստեղծված է, և ձեզ հետ, բոլորիդ հետ միասին ստեղծված բացարձակ արժեքները: Այդ բացարձակ արժեքների՝ անկախության, պետականության, ազատագրված Արցախի, անվտանգ սահմանների հիմքի վրա, սոցիալական լիբերալիզմի հիմքի վրա բարձրացնել Հայաստանը, ոտքի կանգնեցնել կաթվածահար տնտեսությունն ու մշակույթը: Ոչ ոք մեր փոխարեն մեր տունը չի շինելու: Իսկ տուն շինելու համար ամենաառաջին հերթին օջախում համերաշխություն է պետք: Եվ որպեսզի խոսքերս ավելի առարկայական հնչեն, ուզում եմ անդրադառնալ առաջիկա ԱԺ ընտրությունների խնդրին, որ արդեն այնքան կրքեր է բորբոքել:

Ընդհանրապես, հայ նոր իրականության մեջ, ընտրություն երևույթը տնաքանդության աստիճան ծայրահեղացված է: Հիշենք, թե 1995-99թթ. ընթացքում քանի ընտրություն ենք կատարել և դեռ պիտի կատարենք. 95-ի ԱԺ ընտրություններ, 95-ի Սահմանադրության

ընտրություն, 96-ի նախագահի ընտրություն, 97-ի տեղական մարմինների ընտրություն, 98-ի արտահերթ նախագահական ընտրություն, 99-ի ԱԺ ընտրություններ: Եթե անգամ չլինեին 98-ի արտահերթ նախագահական ընտրությունները, պարզվում է, որ 5 տարվա մեջ մենք առնվազն 5 ընտրություն ենք արել: Եվ այս 5 ընտրությունների մթնոլորտը եթե մենք գումարենք իրար, բազմապատկենք և տարածենք այս խեղճ ժողովրդի վրա, պատկերը պարզ կդառնա: Հայ իրականության մեջ ընտրություն կոչվածը բացարձակապես արդար լինել չի կարող, որովհետև մենք փոքր պետություն ենք, մեր ժողովրդի յուրաքանչյուր անդամ գրեթե մեկը մյուսին ճանաչում է, և անձնական ազդեցությունները, անձնական համակրանքներն ու հակակրանքները չափազանց մեծ նշանակություն ունեն: Եվ եթե մենք էլ կողքից կուսակցություններով, մամուլով այդ կրքերի վրա բենզին ենք ավելացնում, պատկերացրեք այս երկրի վիճակը: Թերևս, սա ապագայի խնդիր է: Նոր ԱԺ-ն թերևս անդրադառնա: Միգուցե արժե այս ընտրությունների ինտերվալը մեծացնել: Ասենք, ՀՀ նախագահն ընտրվի 7 տարով, բայց մեկ անգամ, ԱԺ-ն ընտրվի 5 տարով, տեղական մարմիններն ընտրվեն 5 տարով: Այլապես այդ արշավին մենք արդեն չենք դիմանա: Բայց սա, կրկնում եմ, ապագայի խնդիր է, և իմ որոշելու բանը չէ: Ուզում եմ անդրադառնալ այսօրվա ընտրություններին, սպասվելիք ընտրություններին: Ուզում եմ միանգամից հայտարարել, որ այս ընտրությունները ՀՀԿ-ի համար, շարժման համար գերխնդիր չեն լինելու: Ոչ մի ընտրություն չարժի, որ դրա շուրջ ժողովուրդը պառակտվի, առավել ևս՝ թշնամանա:

Մենք հաշտության կոչ ենք անում բոլորին: Թերևս ավելի ճիշտ կլիներ ասել՝ մենք զինադադարի կոչ ենք անում բոլորին: Կանգ առնենք ու ամեն ինչ սկսենք բարության դաշտից: Մենք վերցնում ենք ընտրությունների մաքրության մեր մեծ բաժինը, պատասխանատվության մեր մեծ բաժինը: Մնացյալը ձեր խղճի և ձեր քաղաքական կամքի հարցն է: Նայենք և խոսենք դիտորդներից սկսած մինչև ամենատրիվիալը, մինչև թափանցիկ ընտրությունները: Ամոթ է, մի օր վերջապես պետք է վեր կանգնենք 3-րդ կարգի պետությունների շարքից, աբորիգենների շարքից: Ուզու՞մ եք՝ հրավիրենք աշխարհի ամենալավ դիտորդներին, ուզու՞մ եք համաձայնության գանք և աշխարհին ասենք՝ մենք դիտորդների կարիք չունենք, ինքներս մեր հարցերը ներսում կլուծենք: Առաջարկում ենք նաև՝ խմբավորվել գաղափարների և ծրագրերի շուրջ: Ժողովրդին տանք գաղափարներ և ծրագրեր ընտրելու իրավունք: Կենտրոնական դաշտում մենք պատրաստ ենք խմբավորվել ցանկացած հասարակական և քաղաքական ուժի հետ: Առաջարկում ենք խմբավորվել նաև աջ և ձախ դաշտերում, այլապես վերածվելու ենք լեյտենանտ Շմիդտի որդիների՝ 70-ով, 80-ով, ու ժողովրդից տեղ ենք մուրալու, աթոռ ենք մուրալու ԱԺ-ում: Իսկ նա դրանից այլևս հոգնել է: Եվ մեր ցանկացած ելույթ, ցանկացած խոստում, ցանկացած ծրագիր, եթե ներկայացվում է 100, 120 հոգով, 10 տարի շարունակ դիտվում է որպես ճամարտակություն: Մեզ չվստահելու պատճառ, եթե ազնիվ լինեք, կարծում եմ, պիտի որ չունենաք: Մենք ոչ մի անգամ ընտրություն չենք արել: Ոչ Հանրապետական կուսակցությունը, ոչ Երկրապահը, թերևս բացի վերջին նախագահական ընտրություններից: 95թ. ընտրությունների ժամանակ մենք նույն վիճակում էինք, 96-ի ընտրությունների ժամանակ՝ տխրահռչակ դեպքերից, ողբերգությունից հետո ենք մենք հայտնվել ասպարեզում: Երբ որ ամեն ինչ կատարվել էր, բանակը նոր իշավ քաղաք, ընդ որում, եթե իշավ, դրա պատճառը ես եմ եղել և ոչ թե երկրապահները կամ հանրապետականները: Ձորքն է իշել քաղաք, կրկնում եմ, ողբերգությունից հետո: Եվ մեր ճակատագիրը՝ թե հանրապետականների՝ ԱՄԿ-ի անդամների, թե երկրապահների, կարծում եմ, մեզ չվստահելու առիթ չի տալիս: Եթե կան անվստահության տարրեր, կարող ենք նստել, խոսել, հանել անվստահությունը: Եթե անվստահությունն ինձանից է գալիս, ես պատրաստ եմ ավելի երկար խոսել ձեզ հետ և պատրաստ եմ ավելի չեզոք լինել: Եվ քանի որ իմ մասին ասացի. ուզում եմ ասել մի քանի խոսք նաև իմ մասին:

Հանիրավի ուռճացված է իմ դերակատարությունը քաղաքական գործընթացներում, հանիրավի: Ո՛չ Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք, ո՛չ Ռոբերտ Քոչարյանի օրոք ես չեմ մասնակցել տնտեսական քաղաքականությանը: Ես չեմ մասնակցել կադրային քաղաքականությանը, եթե ինձ մասնակից չեն դարձրել դրան: Ես աշխատել եմ յոթ վարչապետների հետ և ոչ մեկի հետ անձնական կոնֆլիկտ չեմ ունեցել, կարող եք հարցնել իրենց: Ոչ մեկին չեմ ծեծել, ոչ մեկին հանրապետությունից չեմ քշել: Հակառակը, ես նրա հետ խոր բարեկամական, ընտանեկան

կապեր ունեմ: Չեմ մասնակցել սեփականաշնորհման գործընթացին, և ես ինքս ոչինչ չեմ սեփականաշնորհել: Կլաններ չեմ ստեղծել և նպատակ չունեմ, քանի որ համարում եմ կլանայնությունը մեր երկրի ամենամեծ վտանգներից մեկը:

Ի պաշտոնե և նաև կենսագրությամբ պատերազմող երկրի պաշտպանության նախարարը չէր կարող մասնակից չլինել քաղաքական գործընթացներին: Եթե նախարարը չմասնակցեր, ուշադիր լսեք, խնդրում եմ, ամբողջ բանակն էր դառնալու քաղաքական գործընթացների մասնակից: Ես իմ անձով կանգնել եմ արանքում, հասարակության քաղաքական ուժերի և բանակի արանքում՝ ստանալով հարվածներ և ներքևից, և վերևից: Ծա՞տ եք ուզում՝ կարող եմ դուրս գալ քաղաքականությունից: Բայց այդ դեպքում պիտի նկատի ունենաք նաև այս հեռանկարը: Ես դեմ եմ բանակի քաղաքականացմանը, ես դեմ եմ Թուրքիայի տարբերակին: Հաջորդ պաշտպանության նախարարն այլևս ընդհանրապես չի մասնակցի քաղաքականությանը, եթե գործընթացները ճիշտ գնան, եթե իհարկե, ծածկվեն տնտեսական, բարոյական, սոցիալական բոլոր դաշտերը, որոնք ուղղակիորեն առնչվում են բանակին: Բանակն այս հասարակության բաղկացուցիչ մասն է, հասարակության հայելին է, և տնտեսության բացթողումները, սոցիալական բացթողումները, քաղաքական բացթողումները ուղղակի հարվածում են բանակին: Եվ եթե բանակը արյուն է տվել այս երկրի համար, ապա բանակը, բնականաբար, հատկապես, երբ խոսքը վերաբերում է իր ճակատագրին, պիտի որ մասնակից դառնա գործընթացին: Այլ հարց է՝ ամբողջ բանակո՞վ, թե նախարարով: Որոշեք ինքներդ:

Ռոբերտ Քոչարյանի և իմ հարաբերությունների մասին: Վերջին մեկ տարվա ընթացքում ով չի հոգնել, այդ մասին խոսել է: Ասում եմ մեկընդմիշտ, առաջին և վերջին անգամ, որովհետև ավելորդ ճամարտակությունների կարիք չունեմ, մենք մտերիմ ընկերներ ենք, մենք մարտական ընկերներ ենք, կապված ենք նաև ճակատագրով: Ես երբեք Ռոբերտ Քոչարյանի դեմ դուրս չեմ գալու, հույսներդ կտրեք: Մենք նաև ապացուցելու բան ունենք: Լևոն Տեր-Պետրոսյանը հեռանալով՝ մեզ վրա մեծ պատասխանատվություն է թողել: Մենք համոզված ենք, որ ճիշտը մենք էինք, բայց դեռ ձեզ և ժողովրդին էլ պիտի ապացուցենք, որ ճիշտը մենք ենք: Մենք ճակատագրով ենք կապված իրար: Նախագահական արտահերթ ընտրությունների մասին մտքներիցդ հանեք: Նախագահական հաջորդ արտահերթ ընտրությունները Հայաստանի համար կարող են կործանարար լինել: Խուլ խմորվող դժգոհությունները նախագահից սպասվելիք վճռական քայլերի մասին ժամանակից շուտ են: Նախագահը նախագահ դառնալուց անմիջապես հետո սուրը չէր հանելու ճոճեր: Գալու է այդ վճռական քայլերի ժամանակը. լինելու են այդ վճռական քայլերը, ես համոզված եմ և ուզում եմ, որպեսզի համոզված լինեք: Եվ ես ինքս այսօր, նաև այս պահին ինչ որ անում եմ՝ անում եմ պետության համար, անում եմ բանակի համար, անում եմ նախագահի համար նաև: Այլապես կարող էի, եթե քիչ ավելի էգոիստ լինեի, ընտրել կողքից նայողի, ինչու չէ, նաև հերոսի կեցվածք: Կամ էլ կողքից կանգնել և ասել՝ ես եմ, իմ բանակը, բանակը համարում եմ պետության սյունը, ոչ մի բանի չեմ խառնվում, ինչ ուզում եք՝ արեք:

Լևոն Տեր-Պետրոսյանի հետ իմ հարաբերությունների մասին. հարգել, գնահատել և հարգում եմ Լևոն Տեր-Պետրոսյանին: Իմաստուն և բարոյական մարդ ու գործիչ է: Լևոն Տեր-Պետրոսյանը հեռացավ՝ իր հետ տանելով իր համոզմունքները, թողնելով դաշտը մեզ: Եթե Լևոն Տեր-Պետրոսյանը ինքը որոշեր չհեռանալ, ոչ ոք նրան չէր կարող հեռացնել: Եվ այն ճամարտակությունները, թե Լևոն Տեր-Պետրոսյանին հեռացրեցին, և ժամանակավրեպ էր, և ո՞վքեր հեռացրեցին՝ սկսած Վազգեն Սարգսյանից դուրս եկավ մինչև Ղարաբաղի Մուրադիկ, անհեթեթ ու ծիծաղելի են: Եթե Լևոն Տեր-Պետրոսյանը չհեռանար, ոչ ոք նրան չէր հեռացնելու: Եթե ինքը ինձ հեռացներ որպես պաշտպանության նախարարի, ես հեռանալու էի: Բայց այդ դեպքում պատասխանատվությունը իր վրա կմնար: Հիմա ինքը հեռացավ, պատասխանատվությունը թողել է մեզ վրա: Այստեղ պատասխանատվության խնդիր կա, ոչ թե մեկս մյուսին հեռացնելու: Ես Լևոն Տեր-Պետրոսյանին դեմ դուրս չեմ եկել, ես գաղափարն եմ պաշտպանել: Մեր հակասությունը եղել է Արցախի խնդրի շուրջ և Լևոն Տեր-Պետրոսյանի շուրջ եղած մի խումբ մարդկանց շուրջ:

Վանո Սիրադեղյանի հետ իմ հարաբերությունների մասին, Վանոն իմ ընկերն է, ինչպես

որ իմ ընկերներն են Լևոնը, Ռոբերտը, Սերժը, Սամվելը, Բաբկենը, մյուսները: Մենք միասին ահավոր ճանապարհ ենք անցել: Եղել են օրեր, երբ երկրի և մեր ճակատագիրը կախված է եղել մազից: Մենք հաղթահարել ենք այդ դժվարությունները, և դա մոռանալու բան չէ: Եթե ուզում եք ճիշտն իմանալ, իմ անձնական կարծիքը վերջին գործընթացների մասին հետևյալն է, հարցը ոչ կալանավորման հետևանքով, այլ քրեական գործ հարուցելու տարբերակով պիտի մտներ դատարան և դատարանում որոշվեր, թե որտեղ է ճշմարտությունը:

Աղուհացի կատեգորիան, իհարկե, քաղաքական կատեգորիա չէ: Բայց կներեք, հարազատությունն էլ քաղաքական կատեգորիա չէ, հայր ու որդի հարաբերությունն էլ քաղաքական կատեգորիա չէ: Ի՞նչ եք առաջարկում՝ ես դառնայի Պավլիկ Մարոզո՞վ: Աղանդներն ու հոմոսեքսուալիստները դարձել են քաղաքական կատեգորիա: Բայց վաղը եթե ամբողջ աշխարհը լցված լինի աղանդներով ու հոմոսեքսուալիստներով, ես նրանց պաշտպանել չեմ կարող, որովհետև ես դեմ եմ «քաղաքականության մեջ չկա բարոյականություն» սկզբունքին: Գոնե ներքին քաղաքականության մեջ կա՝ բարոյականություն: Իմ հանգամանքում ես համոզված եմ, որ արտաքին քաղաքականության մեջ էլ կա բարոյականություն: Իմ հարաբերություններն իմ պարտնյորների հետ դրսում ստացվել են միայն բաց քաղաքականության պատճառով, փոխադարձ վստահության պատճառով և, կարծում եմ, վատ չեն ստացվել: Ինչ վերաբերում է քաղաքական պատվերին, ուզում եմ ձեզ ասել, որ որևէ կապ չունի դա քաղաքական պատվերի հետ, ես ինքս քաղաքական պատվեր թույլ չէի տա: Ուղղակի Ռոբերտ Քոչարյանը չէր կարող հարցը ԱԺ չմտցնել,այն հարցը, այն խոսակցությունները, որ արդեն 4-5 ամիս պտտվում էին քաղաքում:

Սահմանափակեմ: Ես չեմ ուզում դառնալ նախագահ: Ես չեմ ուզում դառնալ ԱԺ նախագահ: Ես չեմ ուզում դառնալ վարչապետ: Ես ուզում եմ մնալ պաշտպանության նախարար: Ես համարում եմ, որ բանակը ՀՀ կայունության և պաշտպանության հիմքն է: Ես համարում եմ, որ առանց բանակի չկա Հայաստանի Հանրապետություն, առանց բանակի չի կարող զարգանալ տնտեսությունը և հակառակը: Ես համարում եմ, որ ես լավ պաշտպանության նախարար եմ: Ես համարում եմ, որ ես շատ գործ ունեմ անելու այդ համակարգում: Գոնե 2-3 տարի դեռևս անչափ մեծ ծավալի աշխատանք կա, ես կարող եմ դա անել: Ես տեսնում եմ, թե ինչ պիտի անել: Բայց ես նաև զինվոր եմ: Եթե հանրապետության նախագահը վաղը գտնի, որ ես այլ ոլորտում եմ պետք, կարևոր չէ՝ պաշտոնի բարձրացում է, թե ցածրացում, ես պատրաստ եմ զինվորի պես իմ պարտքը կատարել: Թերևս այսքանը իմ մասին: Կարծում եմ, բոլոր ասեկոսեների պատասխանը սպառիչ տվեցի: Այս խնդիրներին այլևս չեմ անդրադառնալու:

Ամփոփեմ խոսքս: Ես հավատում եմ Հայաստանի ապագային: Ես հավատում եմ մեր տնտեսական, գիտական ներուժին: Ես համոզված եմ, որ ինքներս ենք մեր տունը շինելու, բոլորս միասին: Ես համոզված եմ, որ միայն միասնականության դեպքում, ոչ մերկապարանոց բացականչությունների, այլ իրական, գիտակից միասնականության դեպքում միայն դրական լիցքերով մենք կարող ենք ոտքի կանգնեցնել մեր երկիրը: Պիտի կրկնեմ իմ խոսքերը՝ Հայաստանը երբեք ավելի մոտ չի եղել վերջնական հաղթանակին: Մենք ունենք կայուն, մնայուն արժեքներ: Կայուն, մնայուն արժեքների այդ դաշտի վրա, մենք ունենք հուսալի հնարավորություն՝ կառուցելու մեր երկիրը, և 21-րդ դարը շինելու Հայաստանի դար: Սա է իմ համոզմունքը: Սա է շարժման համոզմունքը: Կոչ եմ անում բոլորիդ՝ համերաշխության պայմաններում միասնական լուծել այս խնդիրը: Եվ ամենևին կարևոր չէ, թե ով կառաջնորդի այդ շարժումը:

Ալբերտ Բազեյանը ներկայացրեց ՀՀԿ 5-րդ արտահերթ համագումարի բանաձևի նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Արտահերթ նախագահական ընտրություններից հետո նախադրյալներ ստեղծվեցին Հայաստանը բարդ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու բարոյահոգեբանական վիճակից դուրս բերելու համար: Այդուհանդերձ, կատարված փոփոխությունները հիմնականում վերաբերում են քաղաքական ոլորտին, մինչդեռ տնտեսական բարեփոխումների ընթացքը բավարար չեղավ իրավիճակի նկատելի բարելավման համար: Ավելին, նախորդ տարիներին սկսված անվերահսկելի ազատականացման, առանց տնտեսագիտական լուրջ հիմնավորումների, հապճեպորեն իրականացված սեփականաշնորհման, վարկերի անարդյունավետ օգտագործման և այլ սխալների շարունակական դրսևորումները էլ՛ ավելի են բարդացնում բնակչության սոցիալական վիճակը. չի հաջողվում կասեցնել գործազրկության աճը, որակյալ աշխատուժի արտահոսքը, շարունակվում է սոցիալական շերտերի վտանգավոր չափերի հասած բևեռացումը: Արդյունքում խորանում է ներքաղաքական լարվածությունը, խաթարվում է վստահությունը անկախ պետականության նկատմամբ, ինչը, կարճ ժամանակամիջոցում էական տեղաշարժեր չապահովելու դեպքում, կարող է լուրջ ցնցումների պատճառ դառնալ, վտանգել բարեփոխումների ընթացքն ու Հայոց պետության ապագան: Արմատական բարելավում ապահովելու համար պահանջվում է համախմբել տարիների ընթացքում փոշիացած մարդկային, հոգևոր ու նյութական կարողությունները, ստեղծել առողջ քաղաքական միջավայր, մշակել սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հաղթահարման ծրագրեր և ձևավորել դրանց իրագործման համար անհրաժեշտ քաղաքական հենք:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը համարում է, որ երկրի տնտեսության առողջացումն ու զարգացումը հետխորհրդային շրջանի ներկա փուլի ազգային կարևորագույն հիմնախնդիրն է, որի իրագործումով է պայմանավորված հասարակության բարոյահոգեբանական առողջացումը, սոցիալական իրավիճակի բարելավումը, յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ կյանքի ապահովումը, առողջապահության, գիտության ու կրթության ոլորտների բարեփոխումը, Արցախի հարցի ազգանպաստ լուծումը: Այդ գերխնդրի իրագործման համար պահանջվում են տնտեսական քաղաքականության լուրջ ճշգրտումներ: Չսահմանափակելով շուկայական հարաբերությունների զարգացումը՝ անհրաժեշտ է հստակեցնել և ուժեղացնել պետության կարգավորիչ դերը տնտեսական գործընթացում՝ կարևորելով սոցիալական հիմնախնդիրների լուծումը: Կառուցվածքային վերափոխման կարևորագույն խնդիրը պետք է դառնա զարգացման գերակայությունների հստակեցումը, հիմքում դնելով արտահանման ընդլայնումը, ներքին շուկայում հայրենական ապրանքների մրցունակության ուժեղացումը, արտադրությունների կողմնորոշումը դեպի տեղական հումքային բազայի օգտագործում: Անհրաժեշտ է էապես բարելավել տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը, հակամենաշնորհային հստակ քաղաքականության միջոցով խթանել ազատ մրցակցության և գործարար ակտիվության զարգացումը, ներքին և արտաքին ներդրումների համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կենսունակ արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկումը:

Սակայն տնտեսական հիմնախնդիրների լուծման և սոցիալական արդարության հաստատման համար պահանջվում է օրենքի գերակայության ապահովում,

իրավահավասարության հաստատում, ժողովրդավարության ամրապնդում և զարգացում:

Այդ պայմանների ապահովումը մեծապես կախված է լինելու գալիք խորհրդարանական ընտրությունների ընթացքից: Օրինական և արդար ընտրությունների համար անհրաժեշտ է իշխանությունների և քաղաքական ուժերի բարի կամքի դրսևորում, փոխադարձ հանդուրժողականություն և հրաժարում շահարկումներից ու հատվածական շահերի գերադասումից:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը հայտարարում է, որ հնարավոր բոլոր միջոցները կգործադրի, որպեսզի ընտրություններն անցկացվեն ազատ ու արդար, և այդ նպատակի իրագործման համար ակնկալում է մյուս կուսակցությունների համագործակցությունը: Միայն այդ դեպքում է հնարավոր վերականգնել ժողովրդի վստահությունը պետական կառույցների հանդեպ և ձևավորել երկրի ապագայի նկատմամբ լիակատար պատասխանատվություն ստանձնելու ունակ քաղաքական համակարգ:

ՀՀԿ 5 -ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Մոտ մեկ տարի առաջ տեղի ունեցած իշխանափոխության ընթացքում խորհրդարանում ևս կատարվեցին լուրջ վերադասավորումներ, որոնց արդյունքում «Երկրապահ» պատգամավորական խումբը ընդլայնվեց մի քանի անգամ: Դա ունեցավ տարբեր մեկնաբանություններ, սակայն ոչ ոքի չհաջողվեց կանխատեսել իրադարձությունների հետագա ընթացքը: Անգամ Հանրապետական կուսակցության, Երկրապահ կամավորականների միության և «Երկրապահ» պատգամավորական խմբի հուլիսյան համատեղ հայտարարությունը, թեև նկատելի հետաքրքրություն առաջացրեց, սակայն ընդունվեց փոքր-ինչ թերահավատությամբ: Սակայն երբ պարզ դարձավ, որ այսօր, այս դահլիճում ամփոփվող գործընթացը գնալով ծավալվում է՝ իր մեջ ներառելով նաև մինչ այդ քաղաքական գործունեությամբ չզբաղված, բայց երկրի ապագայով մտահոգ շատ մարդկանց, այն ոչ միայն հայտնվեց ուշադրության կենտրոնում, այլև ուժերի համախմբման խթան դարձավ նաև ուրիշների համար: Այսօր արդեն շատերի համար ակնհայտ է, որ այս գործընթացը լուրջ քայլ է ներքաղաքական կյանքի առողջացման ուղղությամբ, քանզի անցած տարիների անհաջողությունների գլխավոր պատճառներից մեկը ուժերի փոշիացումն է: Եթե 7-8 տարի առաջ շատերին թվում էր, թե մի քանի հոգով կարելի է կուսակցություն ստեղծել, մի խմբով լուծել անկախ պետության կայացման խնդիր ու հետն էլ Արցախի հարցը, ապա այսօր պետք է կույր լինել չտեսնելու համար, որ 7 տասնյակ կուսակցությունների գոյությունը բոլորովին էլ հասուն քաղաքական միջավայրի ձևավորման վկայությունը չէ, որ երեք տասնյակ բանկերի առկայությունը առողջ ֆինանսավարկային համակարգի վկայությունը չէ, որ հազարավոր կրպակների գոյությունը արդյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների վկայությունը չէ: Ավելին, պարզ է նաև, որ համախառն ներքին արդյունքի տարեկան աճը 4-6 տոկոսով, լավագույն դեպքում, կարող է ապահովել իրավիճակի ժամանակավոր կայունություն, այլ ոչ զարգացում: Սպառնալից չափերի է հասնում արտաքին պարտքը, ֆինանսական շուկայի կայունությունը ավելի ու ավելի հաճախ է խախտվում, արտահանման ու ներմուծման հարաբերակցությունը թեև փոքր-ինչ բարելավվել է, սակայն

մնում է աղետալի վիճակում: Մինչդեռ Հայաստանի նման սահմանափակ իրացման շուկա ունեցող երկրի տնտեսությունը զարգանալու համար պետք է ունենա խիստ ընդգծված արտահանման ուղղվածություն: Հետևաբար, պահանջվում են արմատական փոփոխություններ, իսկ դրանց իրագործման համար՝ անհրաժեշտ կարողություններ և պատասխանատվություն ստանձնելու կամք ունեցող քաղաքական ուժի ձևավորում, որի գործունեության առանցքը կդառնա երկրի դուրս բերումը ծանր սոցիալ-տնտեսական ճգնաժամից և տնտեսության զարգացումը: Մի գաղափար, որին պետք է տրվի այնպիսի նշանակություն, ինչպիսին վերջին տարիներին ստացել էր Արցախի ազատագրումը:

Մտայնություն կա, շուկայական հարաբերությունների պարագայում քաղաքական և տնտեսական ոլորտները պետք է հստակորեն տարանջատվեն: Սակայն չպետք է մոռանալ, որ խոսքը վերաբերում է միայն պետական կառավարման մարմինները մասնավոր կապիտալի ազդեցությունից զերծ պահելուն: Իսկ առանց երկրի տնտեսական քաղաքականության պատասխանատվությունը ստանձնելու և սեփական ծրագրեր մշակելու և իրագործելու կարողություն ունեցող քաղաքական ուժի ձևավորման հնարավոր չէ հաջողության հասնել: Ավելին, թեև վերջին մեկ տարում զգացվում են իրավիճակի բարելավման միտումներ, սակայն շոշափելի արդյունքների բացակայությունը հիմնականում պայմանավորված է հենց նման ուժի բացակայությամբ: Պատահական չէ, որ արտահերթ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ անցան անհատականություններ, մինչդեռ մեկ տասնյակի հասնող կուսակցությունների առաջնորդներ ձայների քառորդ մասն էլ չհավաքեցին:

Վերջին հարցումներն էլ վկայում են, որ դեռևս չկողմնորոշված և որևէ կուսակցության ձայն տալու ցանկություն չունեցողները ընտրողների 75 տոկոսից ավելի են: Հետևաբար, կենսունակ և մեծ ներուժ ունեցող քաղաքական ուժի ձևավորումը օրվա հրամայականն է: Պարզ է, որ ուժերի համախմբման գլխավոր ստուգատեսը լինելու են գալիք խորհրդարանական ընտրությունները, որոնց նշանակությունը մեր երկրի ապագայի համար դժվար է գերագնահատել: Սակայն այսօր, համատարած հուսալքության ու դժվարությունների այս շրջանում, երբ իրենց ավելի ու ավելի են զգացնել տալիս հնից մնացած խոցերը, արդյո՞ք, ժողովուրդը կհավատա հայտարարվող նպատակների իրագործմանը: Կարծում եմ, մենք ունենք գրավական, որն ի զորու է հավատ ներշնչելու. դա խորհրդային քաղաքական ճամբարներում և Արցախյան ռազմաճակատում հանուն հայրենիքի ազատության մեր ընկերների նվիրաբերած կյանքերն են, այս դահլիճում նստածներից շատերի թափած արյունն է ու անբասիր կենսագրությունները: Սակայն ակնհայտ է նաև, որ այդ գրավականը մեր ողջ հարստությունն է ու անասելի բեռ մեր ուսերին, որը պարտադրում է միայն հաջողություն: Այս համագումարը պատվիրակներին ամուր կամք և հաղթանակի զորություն տվող, բայց նաև անմնացորդ նվիրումի մղող յուրատեսակ մի ծես է: Գործով արժանի լինենք դրան:

ՀՀԿ 5-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՅՈՒՐԻ ԲԱԽՇՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Կանգ կառնեմ մի քանի կետերի վրա.

1.Ներկա իրավիճակը որպես խաթարված քաղաքական զարգացումների ընթացք:

Երրորդ հանրապետությունում ՀՀԿ-ն գրանցված թիվ մեկ կազմակերպությունն է, որով սկիզբ դրվեց նոր քաղաքական զարգացումների գործընթացին: Համոզված էինք, որ քաղաքական ճշմարիտ զարգացումով կարող է երկիրը հասնի զարգացման, այդ երկրում ապրող քաղաքացիները լինեն պաշտպանված, զգան պետության աջակցությունը և երկրի քաղաքացիները իրենց կուսակցությունների միջոցով իրականացնեն այն իղձերն ու նպատակները, որ դրված են կուսակցությունների ծրագրերում:

Ցավոք, քաղաքական զարգացումները մեզանում ճիշտ հունով չընթացան: Բնականաբար, մենք հռչակել ենք իշխանությունների տարբեր թևերի տարանջատման սկզբունք, բայց չի իրականացվում հստակ վերահսկող մեխանիզմ և չի գործում այն սկզբունքը, որ քաղաքականությամբ զբաղվողները միայն քաղաքական կուսակցութունների միջոցով այն

պետք է իրականացնեն: Այսօրվա սոցիալ-տնտեսական իրավիճակը հենց դրանով է պայմանավորված:

Չեմ ուզում կանգ առնել այլ գնահատականների վրա, բայց կարևորում եմ: Եթե մենք պետք է գնանք այս ճանապարհով, միայն այդ դեպքում կունենանք հաջողություններ, և հայտարարելով քաղաքական դաշտում մեր տեղի մասին՝ հնարավորություն կտանք այլոց զբաղեցնել իրենց տեղը, հանդես գալ ծրագրերով և քաղաքական դաշտում մտցնել հստակություն:

Այո, մենք ստանձնելով պատասխանատվությունը, նաև կարևորություն ենք տալիս մեր ընդդիմադիրներին ունենալու իրենց դերակատարումը, որովհետև միայն ընդդիմադիր օպոնենտի պայմաններում մենք կարող ենք ասել, որ կլինենք ուժեղ և պետք է այդ հնարավորությունը ստեղծենք, առարկայորեն նայենք մեր բացթողումներին, լրացնենք, որից միայն կշահի մեր հանրությունը:

Միայն քաղաքական զարգացումների հեռանկարն է մեզ տանելու այն շիտակ ճանապարհով, ուր կհայտնվենք մենք՝ ունենալով ժողովրդի վստահությունը, ուժը մեր թիկունքում, որը կապահովի ծրագրերի իրականացումը:

Ինչ վիճակում է հայտնվել այսօր ՀՀԿ-ն: Երկրապահ կամավորական միության, երկրապահ պատգամավորական խմբի և ՀՀԿ-ի հայտնի հայտարարություններից հետո, տեղի է ունենում կուսակցական շարքերի զանգվածային աճ, որի համալրման գործում հսկայական դեր ունի այն սկզբունքը, որ այս գործընթացը ղեկավարվում է հանրության մեջ մեծ հեղինակություն վայելող մի անձնավորությունից՝ Վ. Սարգսյանի կողմից:

2.ԱԺ-ում մեծամասնություն կազմող պատգամավորական խումբը՝ ԵԿԽ-ն, որի շատ անդամներ անդամագրվել են ՀՀԿ-ին, կազմում է ԱԺ-ի ոչ բացարձակ, բայց մեծամասնությունը՝ սրանից բխող հետևանքներով:

3.Որպես հավաքական պատասխանատվություն կրող՝ ի՞նչ է անհրաժեշտ անել:

ա)վերականգնել կուսակցություն - ժողովուրդ - կուսակցություն կապը, որը պետք է գործի անխափան, արագ, որպես մի զգայուն գործիք՝ հանրության տրամադրությունը որոշելու առումով:

Անվստահություն է առաջանում քաղաքական ուժի նկատմամբ, որը ստանձնեց ակտիվ նախաձեռնողի դերը: Այո, հաճախ դանդաղկոտությունը բերում է նրան, որ քաղաքական հակառակորդները բացթողումների և սխալների պատճառները հնչեցնելով տարբեր ամբիոններից, իրենք են ստանձնում նախաձեռնողի դերը, և կարծես, իրենք են ավելի շատ հոգում ժողովրդի ցավերն ու հոգսերը: Եթե ստանձնել ենք պատասխանատվություն, ապա այդ ստանձնած պատասխանատվությունը պետք է իրականացնենք ամբողջ ծավալով: Չի կարելի իշխանության բոլոր լծակները օգտագործել միայն մի մասով: Դա հղի է վտանգներով: Ինչ նկատի ունեմ «ամբողջ ծավալ» ասելով:

ա)Կուսակցական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերություններ, կուսակցություն-ԱԺ-կառավարություն փոխհարաբերություններ, ուր ԱԺ-ն պետք է իր հսկողական ֆունկցիան իրականացնի ամբողջ ծավալով:

բ)կուսակցությունը և ԱԺ-ն համատեղ պետք է հանդես գան հանրապետության նախագահի մոտ որոշակի խնդիրներով:

գ)կուսակցություն, երկրապահ կամավորական միություն և ԱԺ փոխհարաբերություն, որը կնպաստի հասարակական կարծիքի ձևավորմանը՝ քվե ստանալու ակնկալիքով:

դ)կադրային ճիշտ քաղաքականություն. կկարողանանք տանել կադրային ճիշտ քաղաքականություն, որի արդյունքում թույլ չենք տա պատահական մարդկանց մուտքը այս դաշտում:

Ինչպես է այսօր ընկալվում ՀՀԿ-ն հանրապետության մեջ: Երկակի: Մեկ, որպես նախկին կուրսը շարունակող, որպես դեպքերի հետևից ընթացող և խորհրդարանական մեծամասնության դերը դեռ չընկալած, իշխանության մեքենան վարել չիմացող ուժ՝ սա մի կողմից, մյուս կողմից՝ հավատ, հույս, որ երևան է եկել մի քաղաքական ուժ, որն այս երկրում ապահովելու է արդարություն և օրինականություն:

Հաճախ սոցիալական կացությունը, որ մենք ունենք ոչ միայն մայրաքաղաքում, այլ նաև

գյուղերում, գործազրկությունը, որը տոտալ բնույթ է կրում, դժգոհություններ են առաջացնում: Միայն շիտակ և արդար ձևերով կայացած իշխանությունը կարող է վայելել ժողովրդի վստահությունը:

Մեր կարգախոսը պետք է լինի՝ հաստատել օրինականություն և արդարություն: Մենք ստանձնում ենք այդ պարտավորությունն ու պատասխանատվությունը:

Մաղթում եմ բոլորիս հաջողություն, կամք, եռանդ ծրագրերի իրականացման գործում:

Շնորհակալություն: